

ԻՆՆԵՐՈՐԻՏԱՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրջ կես տարվանը 6 բուրջ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարբոսները գիտում են ուղղակի  
Դպրատանը. Редакция „Мѣсяцъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և սուր օրերէն):

Տպարարութիւնը ընդունւում է ամեն լիցիւսով:

Տպարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

## ԲՈՂԱՆՈՒԱԿՈՒԹԻՒՆ

Պատրաստ չենք:—Ներքին տեսութիւնը:  
Նամակ Ս. Պետերբուրգից: Նամակ ֆոթից: Նա-  
մակ Ղարսից: Նամակ Նոբնայից: Ներքին լուրեր:  
—Արտաքին տեսութիւնը: Հայաստանի խն-  
դիրը: Թիֆլիս: Պարսկաստան:—Մշակիչ հեռա-  
գիրներ:—Յայտարարութիւններ:

## ՊԱՏՐԱՍ ԶԵՆԲ

Եկող տարի թիֆլիսում լինե-  
լու է միջազգային հնագիտական  
ժողով. դա կը լինի առաջինը Ար-  
կասի ամբողջ հազարամեայ պատ-  
մութեան մէջ, որը ոտ կը դնէ  
Արկասի կենտրոնական բազարը  
հաշիւ ուղեւոր թէ ինչ պատմա-  
կան հարստութիւն է պահել գի-  
տութեան համար այն երկիրը,  
որի մասին հաւասար հետաքը-  
րութեամբ խօսել են և յունաց  
գիցաբանութիւնը, և հնդկաս-  
տանի վէպերը, և հռոմեացոց  
պատմագիրները և արեւելքի աշ-  
խարհակալները: Այդ ժողովը կը  
լինի առաջինը, որը դատաւոր և  
քննիչ կընտրուի համայն ժամանա-  
կակեց գիտութեան կողմից այն  
բոլոր ազգերի կեանքի, վարքի և  
արարքների վրա, որոնք բերամեայ  
ընակութիւն են ունեցել Արկասի  
հողում, կամ թէ ժամանակաւոր  
հիւր են եղել այս տեղ իրանց  
գորբերով և գաղթականութեան  
սայլակներով: Այդ ժողովը կը  
լինի առաջինը, որը կատէ մեռած  
և կենդանի ազգերին, չգիտենք  
արդէն, որ դուք շատ բաժ էք  
եղել միշտ միմեանց վրա յարձակ-  
վելու ժամանակ, գիտենք, որ ձեր  
իդէալը եղել է ձին և թուրը,  
ձեր պարծանքը՝ ուժը և խստու-  
թիւնը, ձեր առաքինութիւնը՝ ար-  
շաւանքը և ասպատակութիւնը,  
բայց մեզ այդ ամենը թիչ է հե-  
տաքրքիր: Մեզ հետաքրքիր է այն  
որն է ձեզնից աւելի բարձր եղել  
իր մարդավայել յատկութիւննե-  
րով, որն է ձեզնից ձգտում ու-  
նեցել դէպի մտաւոր կեանք, որն  
է աւելի հակել դէպի բազարա-  
կրթական գործունէութիւն և  
որն է թողել այս երկրում այն-  
պիսի շոշափելի փաստ և յիշա-  
տակ, որոնց վրա հիմնվելով կա-  
րելի լինի ասել այսօր թէ այս

ինչ ազգը անցրել է իր դարը ոչ  
ինչպէս բոյս, ինչպէս ծառ, այլ  
ինչպէս մարդ և բանական արա-  
րած:»

Եւ այս օրհասական հարց-  
մունքներն են, որ կառաջարկ-  
վեն եկող տարի այն ազգերին, ո-  
րոնց ծնարանը և քնարանը եղել  
է Արկասում, որոնք պահել են  
իրանց սնունդը այսօր կենդանի  
յիշատակներով, կամ կորցրել են  
նորան, թողնելով միայն պատ-  
մութեան էջերում: Բայց ո՞ր ազ-  
գը կարող է կանգնել ժողովի ե-  
րեսին և ասել թէ ասա այն ի-  
րական ապացոյցները, որոնք ցոյց  
են տալիս թէ ինքը բացառու-  
թիւն է կազմել Արկասի ազգերի  
թմրութեան մէջ թէ ինքը ու-  
նեցել է գործունեայ կեանք և  
փայլուն անցեալ, թէ իր նախ-  
նիքը թողել են այսօր աւերակ  
զեղեցիկ տներ, հոյակապ շէքեր,  
ձեռքի ու մորթի վայելուչ արտա-  
գրութիւն: Ո՞ր ազգը կարող է  
առաջ ընկնել և հիւրընկալել եւրո-  
պացի գիտնականներին և թարգ-  
ման ու ներկայացուցիչ լինել նո-  
ցա առաջ իր նախահարց կողմից:  
Միայն երկու ազգ կարող են այդ  
անել հայերը և վրացիք, իսկ մը-  
նացածները ոչ լեզու ունեն խօ-  
սելու և ոչ իրաւունք. մնացած-  
ները կամ մեռած են կամ վայ-  
րենի...»

Բայց արդեօք պատրաստ ենք  
մենք այնչափ, որ կարողանանք  
պատշաճաւոր ընդունելութիւն ա-  
նել եկող տարի մեր թանկագին  
հիւրերին, պատրաստ ենք այնչափ,  
որ մեր հօր սեփական կայքը,  
ձեռքի վաստակը, տուն ու տեղ ցոյց  
տանք նոցա և նկարագրենք մի  
ըստ միով, պատրաստ ենք այն-  
չափ, որ գոնէ մեր գիտնալիքը  
մեր մասին օտարները մեզանից  
աւելի լաւ չիմանան...»

Ահա այս կարեւոր հարցերն են,  
որ զբաղել են ամենից առաջ մեր  
պատմական բեռորդի վրացիներին  
և նոցա պատուի համար պիտի ա-  
սած, որ գոնէ այս պարագայում,  
նոքա այնչափ հեռատես են գտն-  
վել որ կարողացել են վարորօք

հոգալ, որ եկող տարուայ հնա-  
գիտական ժողովի հետագոտու-  
թեան գլխաւոր նիւթերը կը  
պատկանեն գրեթէ միայն Արաս-  
տանին: Արաստանի արձանա-  
գրութիւնները, Արաստանի եկե-  
ղեցիների ճարտարապետութիւն-  
ները, վրաց պատմագիրները և  
վերջապէս վրացագէտ և վրացազը  
մարդիկ պիտի լինեն եկող տա-  
րուայ ժողովին աղբիւրներ մատա-  
կարարները, ժողովի անդամե-  
րը, քարտուղարը և արձանագրող-  
ները: Ո՞վ չէ հաւատում, թող  
նայէ ժողովի կոնսպեկտի վրա, որ  
արդէն տպւած է:

Իսկ հայերը քնած են. թիֆ-  
լիսը և գաւառները հեղեղող, ա-  
մօթ էլ չի լինի ասել հայ ինտե-  
լիգենցիան, մի փոքր անգամ չէ  
հետաքրքիր այդ ամենին, չէ հե-  
տաքրքիր Արկասի մէջ գտնվող  
հոյակապ հնութիւններին, որոնց  
մեծագոյն մասը պատկանում է  
մեզ պէս անհոգ և անպիտան  
ժառանգներ թողած նախահայ-  
րերին՝ հայ ճարտարապետներին,  
հայ պատմագիրներին, հայ աշ-  
խարհակալներին և հայ աշխար-  
հափարութեան: Այդ ամենով չէ  
հետաքրքրվում Արկասի հայ ին-  
տելիգենցիան, նա բաւականանում  
է նորանով, որ ունէ իր զբոյս-  
նում գիտնականութեան պաշտօ-  
նական թուղթը...»

Տեսնելով մեր ինտելիգենցիայի  
այսչափ դատապարտելի անհոգու-  
թիւնը, որչափ երախտագէտ պի-  
տի լինենք հայերս մեծ պ պ.  
Մ. Լյմինին և Ք. Պատկանեանին,  
որոնք հեռու հիւսիսում չունեն  
զաղար, այլ քաղելով գրքերից ինչ  
կարելի է, օգնում են եկող տար-  
վայ հնագիտական ժողովի գործին  
հայոց հնութիւնների վերաբերմամբ:  
Իսկ Արկասի այսչափ դիպրոմա-  
ւոր թափառաշրջիկների մէջ չը  
կայ մի մարդ, որ մի բան կա-  
տարէ, վամուրդ որչափ սիրով պի-  
տի յիշել երեք գործունեայ պա-  
րուններին, Քիւրքչեանին, Վեղա-  
մեանին և Արիցեանին, որոնք  
չեն ընել այն հանգիստ բարձի  
վրա, որի տակ գտնվում է  
բարձրագոյն գիտութիւնների վա-

ւերաթուղթը, նոքա չեն սպրում  
ինտելիգենցիայի լեռարգիական  
թմրութեան մէջ, այլ թողնե-  
լով պաշտօնը, վեր գցելով տուն  
ու տեղ, գրկվելով բոլոր հան-  
գստութիւնից, դատապարտելով  
իրանց ամեն տեսակ ճգնաւո-  
րական զրկանքներին, ամիսներով  
տանջվել են Արակայ ամայի  
դաշտի, Արի բուերի, օձերի և մո-  
ղէսների մէջ և հայասիրութեան  
անունով պատրաստել են մի թան-  
կագին մթեր, որով երեսը պարզ  
ներս կը մտնեն եկող տարի հնա-  
գիտական ժողովի շէքից: Իսկ  
ինչ կատէ այն ժամանակ դիպրո-  
մաւորների մեծաթիւ նախիրը,  
նա ցոյց կը տայ գուցէ իր դիպ-  
րումը, իսկ վերոյիշեալ աշխատող  
պարունները ցոյց կը տան իրանց  
գործը...»

Իր. Նիկողոսեան

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ

Մայիսի 3-ին

Չեմ կարող չը համարել այն օգտաւէ և մի-  
անգամայն խելացի շարժանը, որ յարուցած լի-  
նելով Վշակի միջոցով, իր արդիւնաւոր արձա-  
գանքը գտաւ ազգի մէջ էլ: Կամենում եմ խօսել  
հայ-կաթօլիկների և հայ-աւետարանականների մեզ  
հետ, այսինքն հայ-աւետարանականներին հետ հաշ-  
տակու մտնին: Հաշտութիւնը ազգային, ցեղական  
հողի վրա և ոչ կրօնական հողի վրա: Թող մի  
ազգի դաւանները պատեն Աստուծոն որպէս  
կամին,—միայն թող չը մտնան որ ցեղով նոյն  
ազգի անդամներն են և պարտ են համարուիլ ոյ-  
թերով դիմել դէպի ազգի ընդհանուր շահերը, և  
ընդհանուր բարոյական դարգացումն:

Վշակին ինն տարվայ գործունէութեան ար-  
դիւնք, թէ վիճակի բաղդաւոր բերմունք և ժա-  
մանակի պահանջ, փոյթ չէ ինձ,—միայն չեմ կա-  
րող չուրախանալ, որ նոյն իսկ այդ ժամանակ, երբ  
աւետարանական, կաթօլիկ և լուսաւորչական հա-  
յերի մէջ կրկին հաստատուած է արդէն վաղուց  
խանգարված եղբայրական սէրը, երբ մեր կրօնա-  
բանական եղբայրները սկսած են իրանց հայ գգալ,  
նոյն իսկ այդ ժամանակ Արկասի հայ-կաթօլիկ-  
ները կառավարութեանը խնդրք են մատուցա-  
նում, թէ ցանկանում են ունենալ Անդրկովկա-  
սում իրանց սեփական հայ-կաթօլիկ եպիսկոպոս:  
Որչափ ցանկալի է որ մեր կաթօլիկ եղբայրնե-  
րը եկեղեցական լատին արարողութիւնները  
թողած և անկախ դաւանով Արարածով կաթօլիկ  
եպիսկոպոսից, վերադառնային ազգային, հայոց  
լիզուով կատարվող արարողութիւններին, նոյն-  
չափ էլ ցանկալի է որ մեր աւետարանական եղ-  
բայրները անկախ դաւանով Ս. Պետերբուրգի  
գերմանական բողոքական կոնսիստորիայից, որ  
այնչափ հեռու է Արկասից նրանց հողեր ան-  
միջական դաճանքներ իմանալու ու լցոյցանելու  
համար և իրաւունք խնդրէին իրանց սեփական  
հայ-աւետարանական կոնսիստորիա ունենալ Անդր-  
կովկասում, կամ գոնէ ունենային հայ քարոզիչ-  
ներ և ոչ թէ զերմանացի պատարներ:  
Նամակու կամ Բաղուի աւետարանական հայը



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Սեդրակ Մանգինեանը գրում է մեզ հետևեալ նամակը: «Շատ անգամ ընթերցողը ոչ ժամանակ և ոչ ցանկութիւն ունի ստուգել լրագրութեան մէջ յայտնած մտքերը: Մի երկու խոսքով մենք ցոյց կը տանք, թէ «Մշակը» իր ընթերցողներին դերասանութեանը ինչպէս ի չար է գործ անում մեր վերաբերութեամբ: Նորիս Ասիացի մեզ մեղադրում է, իբր թէ զեղուի առանձնութեան փոխարէն մենք գործ ենք անել զեղուի խնդրութիւնը:—Մենք խոսել ենք «Պրոգրէսիվ» թերթի քննադատութեան մասին, և ոչ թէ զեղուի առանձնութեան մասին, ինչպէս որ Ասիացին իր ընթերցողին մտրեցնում է և մենք զեղուի խնդրութիւնն խոսքը բնաւ գործածած չունենք:—այս էլ նրա երկրորդ փորձ մտրեցնելու համար: Իսկ մնացած յիշոցներն ու եզրակացութիւնները, յոյս ունենալով Ասիացին կիմանայ, թէ ուրեմն ո՞ւմ պէտք է վերաբերել: Նախ քան Սեդրակ Մանգինեանին կը պատասխանենք, որ Ասիացու ֆելիտեանում բոլորովին յիշոցներ չը կային, նա երևի այդ յիշոցները երազումն է տեսել, իսկ ուրիշ կողմից կաննք որ նրա գրվածքից բան չենք հասկանում: Ահա ինչպէս ապագծ է «Պրոգրէսիվ» անարարի մէջ տպված նրա երևելի մանկավարժական յօդուածում: «Այսպիսի ոտանաւորներ շատ կարող ենք բերել, բայց ոչ մէկ անդ ժողովրդական բանաստեղծութեան այն բազմազոյն շարակարտութիւնները, խնդրութիւնները, որ այնքան յարմար է մանուկին, չենք տեսնիր: Արի ու հասկացիր, թէ ինչ է ասում երևելի մանկավարժը: Եթէ լեզուի խնդրութիւնները իր վրա չէ խոսում, ուրեմն այդ ինչ խնդրութեանն էր նա, որոնք այդքան յարմար ու օգտակար են մանուկների համար: Ահա մի նոր և երեւելի մանկավարժական միտք, որ խնդրութեանն էր օգտակար են մանուկներին:... Մի՞թէ խելքը զլին մարդը կարող է այդ տեսակ յիմարութիւններ գրել:

Ստացանք պ. Տիգրան Տէր-Սահանանցից, Պարսկաստանի Սպահան քաղաքի հայ հասարակութիւնից յօդուած մասին սովորականների հաւաքված, և թէ՛հրան պ. պ. Թումանեանց երկայնքով առկարական տան վրա ուղարկված 130 թուման պարսից դրամ, որը ուսուցիչ փողի վերածնով, լինում է 479 ռ. 5 կ.:

Լսում ենք որ Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտէի մէջ մնացին միայն երկու անդամներ պ. պ. Ամատունի և Յովհաննէսյան: Մնացածները հրաժարական տուին: Արդեօք երկու անդամներ կարող են կոմիտէի կառուցել: Կարծում ենք որ չեն կարող: Այդ պատճառով հարկաւոր կը լինէր որ հիմնադրուէր, կամ նուիրատուները ժողովէին, հաշիւ պահանջէին երկու պարոններին և նոր կոմիտէի ընտրէին: Չարմանալի ազգ են հայերը, որքան միտ են նրանք, նոյնքան և անհոգ են դէպի մի անգամ անած փողերի գործարկութիւնը: Թիֆլիսի հայ հասարակութիւնը կարող կոմիտէի տուեց 8000 ռուբլի իսկ այժմ այն ևս չէ հետաքրքրվում թէ ինչ է լինում կոմիտէի տեսիլն:

Լսում ենք որ կովկասի ընդհանուր ֆրանսիական հիւպատոս նշանակվում է պ. Լուի դէ-Կուտուպի, որ մտնիլ պղծական է «Tempo» լրագրի այժման խմբագիր Եարլ դէ-Կուտուպի հետ: Ինչպէս յայտնի է հայ հասարակութեան Եարլ դէ-Կուտուպի մի առանձին նամակով համար է վերաբերվում դէպի հայոց ազգութիւնը, որի մասին նա մօտ 10 նամակներ գրեց երկու տարի առաջ, երբ նա դեռ խմբագիր էր, այլ եկել էր կովկասի պատերազմական բեմը ինչպէս «Tempo» լրագրի խմբագիր: Լուի դէ-Կուտուպի յայտնի է իր առանձին նամակներով դէպի ուսուցիչ ազգը, որ նա արտայայտեց, երբ նա կատարում էր նորագաստ պալատական գաւառներում ֆրանսիայի քաղաքական գործակալի պաշտօնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՒՐ  
Լօնդոնից գրում են լրագրիներին հետևեալը:  
Վերին պալատում շարունակվում են վիճարկում թիւները աղբւրի մասին: Նրանցից յայտնի է Արզնիստանի վրա խոսելուց յետոյ Գրէնվիլ անցնում է արտաքին գործերին և ասում է

թէ կան շատ նշանաւոր խնդիրներ, որոնց վիճակը պահանջում է հաստատաւորութիւն, մեծ գործընթացի և բոլոր պետութիւնների համբարշտ գործողութիւն: Գօշէնի միջոցով անգլիական տերութիւնը ցանկանում է հասնել Բերլինի դաշնագրի չիրագործված յօդուածներին շուտապիտ կատարելուն, որ չը կարողացաւ անել Լայպպէ իր առաջարկութիւններով: Սորան վերաբերվում են Յունաստանի և Չէրնօգորիայի սահմանների խնդիրը և Հայաստանի խնդիրը: Բերլինի կոնգրէսի չը կատարված վիճակները թուում զանկում են և թիւրքիայի նահանգների օրգանական կանոնադրութիւնները: Այդ տեսակ կանոնադրութիւնը արդէն զճաղկված է: Այդ կանոնադրութիւնները ընդունելը առաջ կը բերէր բազմաթիւ լաւ հիմնարկութիւններ, ինքնավարութիւն և իրաւունք սեփական որոշմամբ իրանց հարկերը հաւաքելու և կարգադրելու, որ և միջոց կը տայ թիւրքաց նահանգներին ճշգրտել բաղաւոր ապագային և մեծ օգուտներ կը տայ Եւրոպային: Անգլիական պարլամենտում նկատվեցաւ որ Հայաստանի գրութիւնը սարսափելի է: Մինչև այժմ ոչինչ չը կատարվեցաւ ոչ Բերլինի ոչ էլ Վիպրոսի դաշնագրի գործութեամբ: Բերլինի կոնգրէսի որոշումները իրագործելու համար, ասեց Գրէնվիլ հարկաւոր է բոլոր պետութիւնների համաձայնութիւն և այդ պատճառով ուղարկված է ամեն տեղ մի շրջաբերական այդ խնդրի մասին և նոյն շրջաբերականի պատճէնը ուղարկված է և Բ. Գրան: Հէնց որ այդ կը կատարվի, զօրութեանները կը ներկայացվեն պարլամենտին: Գրէնվիլ ասեց, թէ զոհ է պետութիւնների պատասխաններին և կարծում է որ Բ. Գուռը շատ թոյլ ընդդիմադրութիւն կը ցոյց տայ եւրոպական պահանջներին: Արդէն նախադիմք ընդունված է:

ԹԻՒՐԿԻԱ

«ՊՈԼՈՇԵՍ» լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը:  
Վերջապէս պիտեցին ուղեւորվել Կ. Պոլիս այն պետութիւնների ներկայացուցիչները, որոնք հետաքրքրված են թիւրքիայում կատարվող գործերով: Անցեալ շաբաթ ուղեւորվեցաւ Կ. Պոլիս ուսուցիչ դասակարգ, անգլիական դեսպան Գօշէն նոյն բանը արաւ, միայն նա փոփոխեց իր ձանապարհորդութեան նախադիմքը, առաջ Գօշէն պէտք է գնար Վիեննայի և Տրիեստ, իսկ այժմ նա կայցելէ Փարիզ և Վիեննա ֆրանսիական և աստրիական արտաքին գործերի մինիստրներին հետ խորհրդակցելու համար, այնուհետև կուղևորվի Տրիեստ և Կ. Պոլիս:  
Ձանապարհորդութեան այդ փոփոխութիւնը բաւական կուշացիլ պ. Գօշէնի Կ. Պոլիս հասնելը, որ շատ ցաւալի է: Ինչքան շուտ կը սկսիլ Անգլիայի ձեռնմը թիւրքիայի վրա, անքան աւելի յոյս կայ, որ թիւրքիայի մէջ անկարգութիւնները ծայրայեղութեան չեն հասնի:  
Կ. Պոլիսի ստացված լուրերից երևում է, որ գործը կարող է այդ ծայրայեղութեամբ հասնել: Բացի Սլոնիսիայի մէջ վերջին ժամանակներում պատահած անցքերը, որոնց դէմ Բ. Գուռը անկարող է այնպիսի միջոցներ գործ դնել, որ երկրի մէջ կարգը և հանրապետութիւնը վերականգնվի, ուրիշ նշաններ էլ են երևում, որոնք ապացուցանում են թէ Կ. Պոլիս կառավարութիւնը ինքը չը գիտէ ինչ է անում: Թրիեստի հեռագրերը հարգործեց, որ սուլթանը միջնորդել է Քաղաքի կայսրի առաջ, խնդրելով Կուստանույի սպանողի ներում: Եթէ այդ լուրը ճիշդ է, նրա հարորդած փաստը անօրինակիլ է:  
Մինչև այժմ պատահած այդպիսի գործերի ժամանակ առհասարակ մի կառավարութիւն միջնորդում էր միտի առաջ, որի հը պատասխանը այդպիսի շարագործութեանը զոհվել էին: Իսկ այժմ մի պետութեան թագաւորը, որի Հայաստանը սպանող է, միջնորդում է մի ուրիշ պետութեան թագաւորի առաջ, որի Հայաստանը սպանվել է: Այդ գործը այնչափ անօրինակիլ և անվայել է, որ երկու ներքաղութիւններ միայն կարելի է անել, կամ այդ լուրը սխալ է, կամ սուլթան Արդուլ-Համիդ վանկում է պատեղի Կուստանույի սպանողին, որովհետև այդ չա-

րագործը մահաւատան է, իսկ սպանվածը քրիստոնէայ: Եթէ սուլթանը ճշմարիտ միջնորդել է շարագործի ներման համար, դրա պատճառը այն չէ, որ ինքը սուլթանը շարագործին ներողութեան արժանի է համարում: այլ որովհետև ինքը վախեցում է իր ապահովութեան համար և իրան անգոր է համարում ֆանատիկոսներին զայելու համար:

Այդպիսի միջնորդութիւնը ստորութեան վերջին աստիճանն է, որին կարող է հասնել եւրօպական թագաւորի փոփոխութեան մի իշխան: Այդ նշանակում է, որ սուլթանը խոտովանում է, թէ ինքը անկարող է կատարել այն պարտաւորութիւնները, որ իր վրա դնում է իր աստիճանը: Այն պետութիւնները, որոնք համոզվել են, թէ Բ. Գուռը անկարող է կատարել իր պարտականութիւնները, պէտք է շուտով այնպիսի միջոցներ գործադրեն, որպէս զի Եւրոպայի հանրագոյնութիւնը չը խանգարվի: Նախ յարմար ժամանակ եղաւ յօդ Գրենվիլից պետութիւններին ուղղված հրաւեր Բ. Գրան վրա միջազգային ձեռնմ գործելու համար: Եթէ այժմ բոլոր պետութիւնները չեն ցանկանում այդ հրաւերին հետեւիլ, այնու ամենայնիւ միւսները պէտք է շուտով գործ սկսեն: Այս հանգամանքը ի նկատի ունենալով, ցաւալի է, որ ուսուցիչ դասակարգը Կ. Պոլիս հասնելուց յետոյ, բաւական ժամանակ կանցնի մինչև այնտեղ կը հասնի անգլիական դեսպան պ. Գօշէն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

«ՊՈԼՈՇԵՍ» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Քէհրանից:

Պարսկաստանը միշտ Պարսկաստան կը մնայ և երբէք նա քաղաքակրթված երկիր չի դառնայ:

1875 թուին Պարսկաստանը եւրոպացիների օրնութեամբ արեւմտեան եզանակով փոստ հիմնեց: Գործը շատ լաւ էր դնում: 1877 թուին Պարսկաստանը միջազգային փոստային դաշնակցութեան մէջ ընդունվեցաւ: 1878 թուին 23000 թուման (թումանը 3 ռուբլ է) փոստային եկամուտը 1879 թուին բարձրացաւ մինչև 32000 թուման և թիւ պէտ 1878 թուին 3000 թուման վնաս կար, 1879 թուին 2000 թուման դուր եկանուտ ստացվեցաւ: Այնուամենայնիւ պ'տք է գործնանալ, որ այդքան դուր եկանուտ ըստացվեցաւ, որովհետև Պարսկաստանի մէջ նամակներ գրող մարդիկ քիչ կան և փոստը տեղափոխող ձիաներ էլ թանկ արժեն: Մի և նոյն ժամանակ, որքան ես յիշում եմ, 1879 թուին փոստը մի քանի անգամ կողոպտվեցաւ: Կորած իրեղէնների դները 10000 թումանի էին հասնում և բոլորն էլ ապահովված էին և թէպէտ կառավարութիւնը պարտաւորվեցաւ բաւականացնել տէրերին, բայց նրանց ոչինչ չը վճարեց: Աւելորդ է ասել, որ այդպիսի փաստերից յետոյ փոստային վարչութիւնը կորցնում է իր հաւատարմութիւնը:

Մենք միշտ երեւակայում էինք, որ փոստը միակ հիմնարկութիւնն է, որ աջողվեցաւ Պարսկաստանի մէջ և որ նա երկարաւ կը լինի: Իսկ գործից երևում է, որ պարսիկը միշտ իր հօր որդին կը մնայ: Այդիլի 1-ին փոստը կապալով արվեցաւ մի պարսիկ որոշ զոււարթ և փոստային վարչութեան մէջ ծառայող բոլոր եւրոպացիները արձակվեցին իրանց պաշտօններից, որովհետև նրանք 32000 թուման նկամաւորից չը կարողացան խնայել գնեալ 17000 թուման: Կ'նչ հարկաւոր են ձեզ աթոռներ և սեղաններ, ասում են պարսիկները, մենք առանց նրանց էլ կարող ենք գործ կատարել: Կ'նչ քարեր և աւելորդ ծախսեր են: Զմուռը նոյնպէս չէ հարկաւոր, հասարակ տախնով էլ կարելի է բաւականաւ: Վերջապէս մեծ առձեկներ են տրվում (մեծ կայարանի կառավարելը 10 թուման էր ստանում), մենք դրա կէտով էլ կարող ենք միջոցներ (գրագիրներ) գտնել:  
Կ'նչ եղան դրանց հետեւանքները: Առաջ եւրոպայից Ռուսաստանի վրա մենք շաբաթը երկու անգամ թղթակցութիւններ էինք ըս-

տանում, իսկ այժմ երկու շաբաթը մի անգամ հազիւ ենք ստանում, այնպէս որ այստեղ բնակիչը եւրոպացիները խնդրեցին իրանց հիւպատոսներին որ իրանց նամակներն էլ հիւպատոսաւոր փոստով ուղարկվի: Իսկ պարսկաստանցի փառաւականները, չը հաւատալով փոստային վարչութեան մէջ ծառայող նոր անձինքներին, սկսեցին իրանց նամակները շարժադարների ձեռքով ուղարկել, որոնք Քէհրանի և Կաբէթի մէջ եղած տարածութիւնը անցնում են 17 օրում, իսկ փոստը անցնում էր 12 օրում: Թէպէտ արագութեան մէջ մեծ զանազանութիւն չը կայ, բայց շարժադարներին մեծ գներ են վճարվում:

Քշուտ և ծիծաղելի է պարսիկ ժողովուրդը: Կատարաններ և օրէկներ չը կան: Նահանգապետները կապալաւորներ են, այնպէս որ դրանք նահանգների անկախ տէրեր են համարվում: Մաքսատուներ, դրամատուներ, հեռագրատուներ, փոստը բոլորը կապալով են տված: Ամեն բան ծախվում է, ամեն բան կապալով է արվում:

Մտածեցին դադի լուսաւորութիւն մտցնել: Հրաւերեցին եւրոպացիներին, մինչև կէսը գործարան շինեցին, իսկ յետոյ հաշիւեցին, որ դադը թանկ կը նստի, վաւերեցին եւրոպացիներին, իսկ գործարանը փոքր առ փոքր աւերակ է դառնում: Մտածեցին ելք քարահան լուսաւորութիւն մտցնել: Բերել տուին մեքենաներ, երեք լապտերներ, մի երկու ասիս դուարձարան և թողին: Այժմ լապտերները վերցրած են և նրանց սիւնների վրա փողոցային տղաները ակորթախական շարժմաններ են անում:

Այժմ մտադիր են եւրոպացիներ հրաւերել մաքսատու կազմակերպելու համար: Ես խորհուրդ կը տամ այդ գործը սխաղին զըլխաւոր պայման դնել, որ հատուցանելի բոլոր դրամը հիւպատոսներից մէկին յանձնվի, եթէ ոչ մի դեղեցիկ որ նրան կարձակեն և ոչ մի կօպէկ փող չեն տայ:

ՄԵՍԿԻՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՍՏԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ  
Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՑ, 15 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հարորդում է որ դիւնբորահան դատարանը դատապարտեց Միխայլովին և Մարտրովին կախաղանին, իսկ Տրոչչանուկու աստժանակիր աշխատանքներին 20 տարով, Վէյմարին և Բերլինիովին նոյնպէս աստժանակիր աշխատանքներին 15 տարով, Լեւկնուտային 10 տարով, Կալէնկինին կնոջը 15 տարով, Նատանսունին 6 տարով, Վեռանիկի կնոջը 4 տարով, Մալինովկու կնոջը և Բուլանովին դատապարտեց Տորոլան նահանգների մէջ կացութեանը: Կատալիսը, նախ բան գործ գրվի, կը ներկայացվի կոմս Լօրիս-Մէլիքովի քննութեանը:  
Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՑ, 15 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հարորդում է, որ անցած շաբաթվայ ընթացքում Կայսրուհու առողջութեան մէջ ոչինչ էական փոփոխութիւններ նշմարելի չեկան:  
Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՑ, 15 մայիսի: «Вестн.» լրագիրը խափանված է 7 օրով:  
Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՑ, 15 մայիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ. 50 կ., ներքին 5% տոմսին փոխաւորութեան տոմսակը արժէ 226 ռ., երկրորդ 220 ռ., արեւելեան տոմսին 90 ռ. 25 կ., երկրորդ 90 ռ. 62 կ., երրորդ 90 ռ. 62 կ., ոսկի 7 ռ. 73 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,50 պէնս, ուսուց 100 ռ. Փարիզի վրա արժէ 268 Ֆր. 25 ասնոխ: Բօրայի արամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հասարակից ԳԻՐԴՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

